ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/79> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<28>> օգոստոսի 2025թ.ժ.10:00
/

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Միեր Գևորգյան – համայնքի ղեկավարի օգնական

Անդամներ

Արա Ստեփանյան –աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Քաջիկ Վարդանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Գոռ Թումասյան- աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Փայլակ Հակոբյան – աշխատակազմի գնումների բաժնի պետ

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

2.1. Տեխ Քոնթրոլ ՍՊԸ -ի հայտը կազմված է և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ հրավերով պահանջվող <<Տեխնիկական միջոցներ >> և <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշների:

Մասնավորապես

- հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Տեխնիկական միջոցներ >> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը՝ ներկայացված տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերը:
- հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշով սահմանված առնվազն 1 հոգի որակավորված գեոդեզիստ մասնագետը, ինչպես նաև որակավորված գեոդեզիստի որակավորման վկայականի պատճենը, մատուցվելիք ծառայություններում ներգրավվելու մասին գրավոր համաձայնությունը:

2.2 Էտալոն ՍՊԸ և Բուլգարո ՍՊԸ ՀԳ ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ հրավերով պահանջվող <<Մասնագիտական փորձառություն>>, <<Տեխնիկական միջոցներ >>, <<Աշխատանքային ռեսուրսներ>> , որակավորման չափանիշների , լիցենզիաների:
Մասնավորապես՝

- հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Տեխնիկական միջոցներ >> որակավորման չափանիշով սահմանված բոլոր տեխնիկական միջեցները , ինչպես նաև որակավորումը հիմնավորող բոլոր փաստաթղթերը :
- հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափնիշով սահմանված նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում հանձման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի պատճենը կամ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը
- հայտում բացակայում են հրավերով պահանջվող <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափորոշիչով սահմանված Ձրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ տեխնիկական հսկիչի և Որակավորված գեոդեզիստ մասնագետները և Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ շարունակական մասնագիտական զարգացման <<Հավաստագիրը >>, ինչպես նաև մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի և գեոդեզիստի որակավորման վկայականի պատճենները:
- հրավերով պահանջվող լիցենզիան և ներդիրը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3.. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

2. ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/79 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել 2025 թվականի սեպտեմբերի 03-ին ժամը 10.00-ին

Գնահատող հանձնաժողովի նախագահ ---------- Մհեր Գևորգյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ ---------- Արա Ստեփանյան

---------- Քաջիկ Վարդանյան

---------- Տիգրան Վարդանյան

---------- Գոռ Թումասյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար ---------- Փայլակ Հակոբյան